ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ 12 հունիսի 2023թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 16-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Ալվարդ Համբարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը, Արամ Կարապետյանը, Աննա Ալթունյանը, Վահե Ղազարյանը, Գուրգեն Փիլոյանը, Արկադի Ասատրյանը, Մանուշ Աթյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 11 անդամներ՝ Հայկ Սիսակյանը, Գևորգ Մարգարյանը, Վարազդատ Մխիթարյանը, Սամվել Սիմոնյանը, Նունե Էիտիբարյանը, Վարդուհի Թումանյանը, Արամայիս Փիլոյանը, Վաչիկ Գրիգորյանը, Նարինե Հակոբյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանը, «Հանրային տրանսպորտ այսօր» քաղաքացիական նախաձեռնության խմբի անդամ Անուշ Պետրոսյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, «Մուլտի տրանսպորտ» ՍՊԸ գլխավոր տնօրեն Արթուր Դալլաքյանը և ընկերության ներկայացուցիչներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 12-ի նիստի օրակարգի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին

/Զեկուցող՝ «Հանրային տրանսպորտ այսօր» քաղաքացիական նախաձեռնության խմբի անդամ Անուշ Պետրոսյան/

Այսպիսով, 1 հարցից բաղկացած օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները- ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Համայնքի ավագանու անդամ Արկադի Ասատրյանը նիստին ներկայացավ օրակարգի քվեարկությունից հետո:

1. ԼՍԵՑԻՆ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին» հարցը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով, հաշվի առնելով «Հանրային տրանսպորտ այսօր» քաղաքացիական նախաձեռնության 2023 թվականի մայիսի 12-ի դիմումով ներկայացված՝ Սպիտակ համայնքի բնակիչների նախաձեռնությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ:

ՈՒՂԵՐՁ

ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

«Հանրային տրանսպորտ այսօր» քաղաքացիական նախաձեռնության 2023 թվականի մայիսի 12-ի դիմումով ներկայացված՝ Սպիտակ համայնքի թվով 507 բնակիչների նախաձեռնությամբ հայտնվել է.

«Սպիտակ խոշորացված համայնքի 21 բնակավայրերից 12-ում հանրային տրանսպորտը բացակայում է: Մյուս համայնքների դեպքում պաշտոնապես, այսինքն սահմանված կարգով ընտրված ուղևորափոխադրող չկա, սակայն փոխադրում փաստացի իրականացվում է: Բացառություն է կազմում Սպիտակ քաղաքը, որտեղ հանրային տրանսպորտը սպասարկում է քաղաքացիներին օրինական հիմքերով:

Խոշորացման արդյունքում առաջացած այս խնդիրն արդեն մեկ տարուց ավել է չի լուծվում:

Սույնով հայտնում ենք մեր աջակցությունը նախաձեռնող խմբին ներկայացնել հարցը ներառելու Սպիտակ համայնքի ավագանու օրակարգում:

Հարցը ներկայացնել երկու կետից՝

1. Սպիտակ համայնքի ավագանին դիմում է ՀՀ կառավարությանը ուղերձով, որպեսզի Կառավարությունը քայլեր ձեռնարկի Սպիտակ խոշորացված համայնքի համար ավտոբուսային պարկ ստեղծելու համար: Այս նպատակին ռեսուրսներ հատկացնելու համար պետք է գնահատել համայնքում արդեն իսկ ներկայացված և հաստատված սուբվենցիոն ծրագրերի նպատակահարմարությունը և ծախսերի արդյունավետությունը (օրինակ՝ արդեն մի քանի անգամ ֆինանսավորվող Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի պալատի վերանորոգումը):

2. Հանրային տրանսպորտ չունեցող բնակավայրերի տրանսպորտի խնդիրը լուծելու կամ մեղմելու նպատակով համայնքապետարանի կողմից գումար հատկացնել այս բնակավայրերում տրանսպորտ ապահովելու նպատակով այնքան ժամանակ մինչև տրանսպորտի խնդիրը կկարգավորվի 1-ին կետի համաձայն»:

Հաշվի առնելով վերը նշված նախաձեռնությունը և այն հանգամանքը, որ համայնքների միավորումից հետո Սպիտակ համայնքի ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու համար հայտարարվել է երեք մրցույթ, որոնք չեն կայացել մասնակից չլինելու պատճառով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին խնդրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը Սպիտակ համայնքի ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների խնդիրը լուծելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ, այդ թվում՝ ավտոբուսներ ձեռք բերելու համար պետական բյուջեից համայնքին ֆինանսական միջոցների հատկացման կամ ավտոբուսներ նվիրաբերելու եղանակով:

Ծանոթացվեց քննարկում: Հնչեցին հարցեր: Զեկուցողին հարցեր ուղղեցին Արտակ Մաթոսյանը, Համլետ Մազմանյանը, Սասուն Ասատրյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը:

Ուղերձի նախագծի և ներհամայնքային երթուղիների սպասարկման խնդրի վերաբերյալ մեկնաբանությամբ հանդես եկավ Արթուր Դալլաքյանը: Նրան ևս ուղղվեցին հարցեր:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (10) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (6)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ԱԼԿԱՄԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՋԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ
ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ
ՍԱՄՈՒԷԼ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ